ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2014 թ. մարտի 7 թիվ 26-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ Ն.ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի փետրվարի 4-ի N 11-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014թվականի հիմնական միջոցառումների պլանի 7.4.1 կետի պահանջները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2014 թվականի մայիսի 6-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակի Ն.Սիսակյանի անվան թիվ 5 ավագ դպրոցում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն <<Փլատակներում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում և իրականացում>> թեմայով:

2. ՈՒսումնավարժությանը ընդգրկել՝

   Արագածոտնի ՄՓՎ-ն, Աշտարակի ՀՓՋ-ից մեկ մարտական հաշվարկ, ճանապարհային ոստիկանության 2 հաշվարկ, «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շտապ բուժօգնության ծառայության գծային բրիգադը, «ՀԷՑ» ՓԲԸ Մուսալեռ մասնաճյուղի և «Գազպրոմ Արմենյա» Արագածոտնի մասնաճյուղի արձագանքող ուժերը և դպրոցի կազմավորումները:

3. Սահմանել որ՝

   1) ուսումնավարժության ղեկավար հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետը,

   2) ուսումնավարժության ղեկավարի տեղակալ է հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալը,

   3) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ է հանդիսանում մարզային փրկարարական վարչության պետը:

4. Հաստատել՝

   1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը համաձայն հավելված N 1-ի,

2) ցուցադրական ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային-պլանը՝ համաձայն հավելված N 2-ի:

5. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) ապահովել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2014 թվականի ապրիլի 25-ը ներկայացնել ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը,

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի,

3) մինչև սույն թվականի մայիսի 1-ը զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին,

4) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման ավարտից 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

6. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) անհրաժեշտության դեպքում ուսումնավարժության ղեկավարման շտաբին ապահովել գործնական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

7. Գործնական միջոցառումների խմբի ղեկավարին՝ ապահովել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավվող ուժերի հետ գործնական միջոցառումների տեղամասերի նախապատրաստման հարցերով:

8. Ուսումնական տեղամասերի ղեկավարներին՝ ապահովել իրականացվող գործնական միջոցառումների ընթացքում անվտանգության կանոնների պահպանումը մասնակիցների կողմից: Կանոնների խախտման դեպքում անհապաղ դադարեցնել իրականացվող գործողությունները և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման համար:

9. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համատասխան պլանները, համլրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով,

2) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ,

3) ուսումնավարժության անցկացման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները,

4) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

10. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել ուսումնավարժության ղեկավարի տեղակալի վրա:

11. Սույն կարգադրությունը հայտարարել ըստ առընչության:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2014թ. մարտի 7-ի թիվ 26-Ա կարգադրության

ԿԱԶՄ

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

1. Շտաբի պետ՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Շ.Շամիրյան
2. Խաղարկման և վերլուծական խմբի ղեկավար՝ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ պետ-վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ՝ Հ.Դարբինյան
   1) խմբի անդամներ՝
      ա. Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ պետ-վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Հ.Կարապետյան

      բ. Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ, փ/ծ փոխգնդապետ Ա.Հակոբյան

3. Գործնական միջոցառումների խմբի ղեկավար՝ Աշտարակի ՀՓՋ հրամանատարի տեղակալ, փ/ծ ավագ լեյտենանտ Ա.Շամիրյան

   1) խմբի անդամներ՝

      ա. Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Վ.Առաքելյան

      բ. Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Վ.Հարությունյան

   2) հրդեհաշիջման աշխատանքների տեղամասի ղեկավար՝ Աշտարակի ՀՓՋ 2-րդ խմբի պետ, փ/ծ լեյտենանտ Հ.Գյուրունյան

   3) փրկարարական աշխատանքների տեղամասի ղեկավար՝ Աշտարակի ՀՓՋ 4-րդ խմբի օղակի հրամանատար, փ/ծ ավագ ենթասպա Հ.Նահապետյան

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Հ.Գեղամյան

Հավելված N
ՀՀ Արագածոտնի մարզպետ
2014թ. մարտի 7-ի, թիվ 26-Ա կարգադրությ

ՕՐԱՑՈՒՅԱՑԻՆ ՊԼԱՆ

Աշտարակի ավագ դպրոցում ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման

ՀՀ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման պատասխանատու	Նշումներ
1	2	3	4	
	1. Կազմակերպչական միջոցառումներ			
1.	Ելակետային տվյալների որոշում ուսումնավարժության մտահղացման մշակման համար	մինչև 10.03.2014թ.	ՀՏՈՒ ղեկավար	
2.	ՀՏՈՒ-ի անցկացման վայրի տեղազննություն	մինչև 10.03.2014թ.	ՀՏՈՒ ղեկավարի տեղակալ	
3.	Խորհրդակցություն ուսումնավարժության փաստաթղթերի նախապատրաստման ուղղությամբ	մինչև 10.03.2014թ.	ՀՏՈՒ ղեկավարի տեղակալ	
	2. Ուսումնավարժության փաստաթղթերի մշակում			
1.	Ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման հրամանի կազմում	մինչև 07.03.2014թ.	ՀՏՈՒ ղեկավարի տեղակալ	
2.	Մտահղացման սխեմայի կազմում	մինչև 20.03.2014թ.	ՀՏՈՒ ղեկավարի տեղակալ	
3.	Ուսումնավարժության անցկացման պլանի մշակում	մինչև 15.04.2014թ.	ՀՏՈՒ ղեկավարի տեղակալ	
4.	Ուսումնավարժության փաստաթղթերի հաստատման ներկայացում	մինչև 25.04.2014թ.	ՀՏՈՒ ղեկավարի տեղակալ	
	3. ՈՒսումնավարժության վայրի և մասնակիցների նախապատրաստում			
1.	Ուսումնավարժության մասնակիցների հետ պարապմունքների անցկացում	մինչև 30.04.2014թ.	ՀՏՈՒ ղեկավարի տեղակալ	
2.	Ղեկավար կազմի և մասնակիցների հրահանգավորում	մինչև 02.05.2014թ.	ՀՏՈՒ Ղեկավար	
3.	Ուսումնավարժության վայրի նախապատրաստում	մինչև 05.05.2014թ.	ՀՏՈՒ ղեկավարի տեղակալ	
4.	Զեկույց ՀՏՈՒ-ի ղեկավարին ուսումնավարժության պատրաստ լինելու մասին	մինչև 05.05.2014թ.	ՀՏՈՒ ղեկավարի տեղակալ	

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար **Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**